

գելուսօրէն բոլորովին անտեղի է ուրիշ սիրականի խնդիր ընել, երբ ըստ Զեռագրին հաւանական մեկնութեան Նինոս եւ իր նշանածը սիրով իրարու հետ կապուած էին: Եթէ լուրջ նկատողութեան փաստ մը կայ, ան ալ Նինոսի Հայաստանի արշաւանքն է, որ դարձեալ շատ կասկածելի պէտք է նկատենք, քանի որ ըստ Վէպին Նինոս Հայաստան կ'արշաւէ կ'ատղած Հայերը նուաճելու համար: Կ'երեւայ թէ նախընթաց տողերու մէջ խօսք եղած ըլլալու է Հայերու ապստամբութեան մը մասին. ապա թէ ոչ ՝ կատղած Հայերը նուաճելու խօսքը իմաստ չունի: Եւ կամ՝ պիտի ըսենք թէ ըստ Վէպին Նինոս թերեւս նախընթաց արշաւանքի մը միջցին իր նշանածին միւս սիրականը՝ այսինքն՝ Արայինած եւ կամ սպաննած ըլլալուն համար Հայերը կատղեր էին: Առաջին ենթագրութիւնը կարելի է, բայց ոչ ցուցանելի. վասն զի ցուցում չկայ, իսկ երկրորդը բոլորովին հակառակ է Արայի առասպելին, ուր Արայ ոչ թէ Նինոսէն, այլ Շամիրամէն մղուած պատերազմի մը մէջ կը սպաննուի:

ԴՐԱՑ. Հ. Ա. ՄԱՑԻԿԸՆ



## ՄԻՀՐԱ ՀԱՅՈՅ ՄԵԶ

(Ծարուակութիւն:)

Ե.

### ՄԻՀՐԻ ԳԻՒՅՑՈՒՄԸ

1.

Կրօնների պատմութեան մէջ յաձախ կարելի է նկատել այն երեւոյթը, որ բարի աստուածը կամ գիւցազնը ժամանակի ընթացքում օժտուում է չար աստծու, չար շիցազնի կամ զեւի յատկութիւններով: Այս երեւոյթը կարելի է անուանել դիւացում: Դիւացումը կատարուում է երկու ուղղութեամբ. առաջին գէպքում չար են հոչակուում օտար ժողովուրդների բարի աստուածները կամ գիւցազները. երկրորդ գէպքում սեփական բարի աստուածներն են զրկում իրենց լուսապսակից եւ զատում չարագեւերի շարքում: Կարճ ասելու համար առաջին կարդի գէպքերը կ'անուանենք օտա-

րինի դիւացում, իսկ երկրորդ կարգի գէպքերը՝ սեփականի դիւացում: Կրօնների պատմութեան մէջ օտարինի դիւացման ամենափայլուն օրինակներ տալիս է Հին Կտակարանը, որ բոլոր աստուածները սուս ու չար կը յայտարարէ: Հրէական կարծիքի բանաձեւումը տալիս է սաղմոսերգուն՝ ասելով, թէ «ամենայն աստուածք հեթանոսաց դեւը են<sup>1</sup>»: Եեփականի դիւացման նշանաւոր օրինակն է արիական աստուածների դիւացումը: Յայտնի է, որ հնագոյն դարերում արիական ազգերն ընդհանուր դիցարանութիւն են ունեցել. այս յատկապէս անվիճելի է հնդիկների ու պարսիկների վերաբերմամբ: Սակայն ժամանակի ընթացքում պարսիկները համում են կրօնական զարգացման մի աստիճանի, երբ սկսում են դիւացնել իրենց պաշտած հին աստուածները, որոնք շարունակում էին պաշտուել հնդիկների կողմից: Սրա հետեւանքով Վեդայի բարի աստուածները, մէջն առած նոյն իսկ լոյսի աստուած ինդրան էլ, զառնում են չար ոգիներ ու գեւեր<sup>2</sup>: Մինչեւ անգամ անհնկրիստերէն գենա բառը, որ նշանակում էր լոյս ու աստուած՝ զենդերէնում գեավա և պահէլու աստուածների կողմից: Սրա հետեւանքով Վեդայի բարի աստուածները, մէջն առած նոյն իսկ լոյսի աստուած ինդրան էլ, զառնում են չար ոգիներ ու գեւեր<sup>3</sup>:

Կրօնների պատմութեան հասարակագիտական ուսումնասիրութիւնն անշուշտ պէտք է աչքի առաջ ունենայ դիւացման երկու տեսակներն էլ՝ չմոռանալով սակայն, որ կրօնի զարգացման ընթացքում հսկայ դեր վիճակուած է ոչ թէ օտարինի դիւացմանն, այլ սեփականի դիւացմանը: Վերջինս է զաղափարաբանական ցուցանիշը հանրային հողերանութեան փոփոխութիւնների, որոնք ոչ բանութիւն են, բայց եթէ հանրային-ընկերական կեցոյթից բդիսող երեւոյթներ: Հայկրօնի պատմութեան մէջ էլ զեր է խաղացել դիւացումը իւր երկու տեսակներով:

Մեր զիցարանութեան մէջ օտարինի դիւացման հետաքրքրական օրինակներ են Բէլն ու Բարչամը:

Ասորա-բարելացիների մէծագութունը — երկնքի ու արե-

<sup>1</sup> Մեր մատենագիրների մէջ Եփիկն օգտառում է այս բանաձեւից գրելով. «Եւ զի գիւաց գիւտ է կո.ապաշտութիւնն, մկայ է դաւիթ, թէ ամենայն աստուածք գեթանոսաց գեւը եւոյ (Եփիկ, Բ. 105):

<sup>2</sup> Յմի, «Изследования», 68—69, 77:

<sup>3</sup> Յմի, «Изследования», 77, Hübschmann, «Արմ. Գր., 140:

դակի աստուածը — Բէլ (= Բաալ) ու Բար-  
Շամ (= Բաալ-Շամին) անունով՝ հին հայե-  
րէն ներկայանում է իբրեւ չար ու բռնակալ  
տիտան, աստուած, որի դէմ կոռւի են ել-  
նում հայրենի մեծագոյն աստուածները  
կամ դիւցազները, Հայկն ու Արամը: Մի-  
ջին դարերում օտարինի դիւցացման հիանալի  
նմուշներ են այն որակումները, որ տալիս  
են հայ դաւանաբանները մահմեղականու-  
թեան հիմնադրին-Մահմեղին ու մահմեղա-  
կանութեան Մեսիային, այն է Մահմուն  
կամ Մեհղուն: Գրիգոր Տաթեւացու «Ընդ-  
դէմ Տաճկաց» հետաքրքրական գրուածքը  
Մահմեղին անուանում է Կարապետ Նե-  
ոինն, իսկ Մահղուն, որ ըստ մահմեղա-  
կաների գեռ դալու է, նեռն<sup>1</sup>:

Յատկապէս ուշագրաւ են սեփականի  
դիւցացման օրինակները մեզանում:

Այս քաջ՝ կամ քաջք բառը: Ոչ միայն  
քաջութիւնն էր համարում հայոց մէջ ա-  
մենամեծ առաքինութիւն, այլ եւ մեծագոյն  
առաքինութիւնը կոչում էր քաջութիւն:  
Հայոց աստուածներին ու դիւցազն արքա-  
ներին էր տրում «քաջ» մակղերը: Քաջ  
ողիները կամ քաջքերն ամպրոպի ու կայ-  
ծակի վիշտապամարտ զինակիցներն էին,  
բարի ողիներ, ինչպէս քրիստոնէական կրօ-  
նի մէջ՝ հրեշտակները: Քաջքերն էին բըռ-  
նում, կարանաւորում վիշտապազուններին ու  
զեւերին: Զիմնուելով նաեւ մի հին ձեռագիր  
բաւարանի վրայ, որ գրում էր, թէ «քաջ է  
ողի ըստ ինքեան բարի», Մկրտիչ էմինը քա-  
ջերին կամ քաջքերին միանդամայն ձիշտ  
բնորոշում էր իբրեւ «բարի ողիների», որոնք  
հակաղլրում են զեւերին կամ չար ողինե-  
րին»<sup>2</sup>: Սակայն երբ ժամանակները փո-  
խուում են եւ քրիստոնէութեան մուտ զոր-  
ծելու հետեւանքով փոփոխուում են կրօնա-  
կան-դիւցաբանական հայեացքները, հեթա-  
նոսութեան բարի ողի քաջքերը դիւտանում  
են, եւ այս բառը կորցնելով իւր լու-  
իմաստը՝ դառնում է «չարք» կամ «չա-  
րունք» բառերի նոյնանիչ<sup>3</sup>:

<sup>1</sup> Բարգէն եպա. Կիւլսէրեան, «Խոլամը հայ մատե-  
նագրութեան մէջ», «Հանդէս Ըմօքեպեց», 1928, էջ 450. —  
«Եւ որ այժմ եկեաւ է մոլար առաջնորդն ձեր, որ է կա-  
րապետ ՚նեռինն...» Մեռանին ի ձեռս ՚նեռինն, որ է  
Մահդի էլ զամանեն:

<sup>2</sup> Թմին, 45:

<sup>3</sup> Տարբեր տեսակետ պաշտպանելով՝ քաջքերի մասին  
մանրամասն խօսել է Մ. Աբեղիանը. տեսէք Abeghian,  
104—110 ու Աբեղիան, «Հայ ժողով, առասպելները», 370—376:

Էմինն իբրեւ դիւցացման օրինակ բերում  
է նաեւ Արուսեակ անունը կամ բառը: Նրա  
ասելով Արուսեակ (= Արուսի-ակ) բառը ոչ  
այլ ինչ է, բայց եթէ սանսկրիտներէն arusha  
կամ arusha բառը, որ իբրեւ յատուկ անուն  
գործածուելով նշանակում էր «առաւտօտուայ  
փայլուն աստուածութիւն»: Երկնային մար-  
մինների պաշտամունքի շրջանում փայլուն  
լրւսաստղ Աստղիկը կամ Արուսեակը պաշ-  
տուել է իբրեւ բարի աստուած կամ աս-  
տուածուէի<sup>1</sup>: Բայց ահա դալիս է քրիստո-  
նէութիւնը: Արուսեակն այլ եւս չէր կարող  
բարի ողի համարուել. նա դիւտանում է, եւ  
հայերն սկսում են Արուսեակ անուանել «զա-  
սից թափած» հրեշտակին, սատանային,  
երկնալիք սակայէլին<sup>2</sup>:

Վերջապէս յիշենք Սանդարամետի գար-  
գացումը: Հայոց Սպանդարամետը զենդա-  
կան Spenta armaitisը, պահլաւական Spanta-  
armatը, նոր պարսկական Sipandarmat — Is-  
pandarmati<sup>3</sup>: Սա երկրի ողին էր, համա-  
պատախանում էր յունաց Դիոնիսին եւ եր-  
կրագործ ժողովրդի մէջ անշուշտ ամենա-  
յարգի աստուածութիւններից մէկը պէտք  
է համարուէր: Հայաստանում քրիստոնէու-  
թեան ծաւալումն ազդեց Սանդարամետի  
բնոյթի վրայ էլ: Այս դէպքում էլ հինն ու  
վատը դարձաւ հոմանիչ: Կենսատու մայլ  
երկիրն, արգասարեր Սանդարամետը դար-  
ձաւ մահանու անդունդ, սոսկալի դիւտարան,  
չարքերով ու սատանաներով լի ստորեր-  
կրեայ աշխարհ, որը հակադրում է լուսաշ-  
խարհին եւ կռում երկնքի ու երկնայինների  
դէմ<sup>4</sup>: Սանդարամետականը համազօր է  
դառնում սատանայականին, եւ սանդար-  
մետական սեելիս չատ անդամ հասկացում  
է հէնց ինքը Սատանան: «Եւ ահա կարծիս  
կասկածանաց մեղ եղեալ՝ յԱշտիշտայ դից

<sup>1</sup> Այս պաշտամոնքի հետքը գտնում ենք հայ ժող-  
ուագի արդի այն հաւատավերի մէջ, թէ մայն Արուսեակ  
պատղի տեսքն է մեղնում օձերին, Abeghian, 37:

<sup>2</sup> Թմին, 77, Ամլան, «Հին հաւատքը», 111: Մի նմուշ  
Գր. Մագիստրոսից. «Զար ոչ գոյ եւ ոչ գոյացեալ եւ  
ոչ ի գոյ է, եւ զի՞նդի ի սատանայէ սեեմ եղեալը», ո՛ւ  
երբեմն Արիւսակն (sic) էրո, «Թղթերը», չ., «Առ Իրաց-  
հիմ ամբայն վասն հաւատոց», 181:

<sup>3</sup> Թմին, 35, Գելցեր, «Դիիցարանութիւն Հայոցի»,  
«Բազմավէպ», 1897, էջ 21—22, Hübschmann, «Arm.  
Gr.», 73—74, Ամլան, «Հին հաւատքը», 307—312: Թ. Ար-  
ծունու և. գ. 28-ի աղաւաղուած խօսքը — «Երկրի պահ-  
ուիկ Սպանդարամետ աստու ծոյ էր — ուղղվում է Կափան-  
գարմատ — իսպանդարամատ փոփոխակով այսպէս. «Երկրի

<sup>4</sup> Թմին, 35:

դեցազնական յարձակման, գուցէ Մանդարամետականին խղեալ կապանաց»... , Գր. Մագիստրոս, «Թղթերը», ի՛, «Առ վարդապետն Սարգիս», 66: Դիտելի է, որ սանդարամետ եղակու փոխարէն դործ է ածում նաև սանդարամետ, ինչպէս որ ունենք դիմ, քաջի, չարի, չարունիք, ալի, շիդարի: Այս յաճախ անեղական ձեւերն անչուշտ ծայրայեղ բազմութեալաշտական հայեցքի արտայայտութիւններ են:


Եերած օրինակներն ակներեւ ապացուցում են, որ հայ կրօնի պատմութեան մէջ դիւացումն անուրանալի է: Այս հաւաստելուց յետոյ մօտենանք մէր բուն նիւթին եւ տեսնենք, թէ արդեօք մէր կրակի աստուածներն — Արտաւաղին ու Մհեր-Մհերը ենթարկուել են դիւացման դործին, եւ եթէ այս՝ ի՞նչպէս: Դիւացման մանրամասն ուսումնասիրութիւնը մէր նպաստակը չէ, բայց նիւթը թէկուզ թուուցիկ ամբողջազնելու միտումով հարկ ենք համարում մատնանշել անողոք դիւացման մի քանի նմուշներ էլ՝ քրիստոնէական աղանդների դադաիսարախօսութիւնից առնելով: Այսպէս, Բ. Պարի աղանդապետ Մարկիոնի մասին Եղնիկը դրում է. «Եւ այնչափ յանդնեալ սասանայութեան ոգւովն՝ մինչեւ ի պատգամացն Հոդոյի քաղ հանել... եւ զշին կտակարանս ամենեւին ուրանալ, որպէս թէ յանզգամէտ սուեպ իցեն եւ ոչ ի բարոյ»: (Եղնիկ, Դ, 176, հմմտ. Քեյհակ, 115): Նոյն իմադ, 176, հմմտ. Քեյհակ, 115): Նոյն իմադ, նում ենք նաեւ Մանու հետեւողների, այն է՝ Մանիքեցոց մասին. «Ինչ վերաբերում է Հին Կտակարանին, — ասում է Աէյնաքը, — Կտակարանին, — ասում է Աէյնաքը, պապա մանիքեցիք այն մերժում էին ամբողջովին: Մովսէսն ու մարգարեները դեւեր էին: Հրէից Աստուածը Խաւարի իշխան էր Միայն :» (Քեյհակ, 114—115): Հայ աղանդներից պօղիկանների մասին նոյնը հաւասարում է Գր. Մագիստրոսը. «Աւագիկ պօղիկեանքդ, որք ի Պօղոսէ Մամոստացոյ դեղեաւք... եւ ասեն. Պօղոսս սիրեմք եւ զՊետրոս ամիծեմք, եւ Մովսէս զԼսուածոյ եւ ասեն արարիչ երկնի երկրի զատամայ»: («Թղթերը», Կի, «Պատասխանի թղթոյն կաթողիկոսին Ասուրոց», 161:) Նոյն այս մտայնութեան արտայայտութիւն են մէր «Նոր թոնդրակեանցոց» Հաւատարմատի խօսքերն էլ, որոնք նոյն ուղղուած են հայ լուսաւորչականների ու նմանների դէմ. «Ուրացեալ էք զուրբ դործ»

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սրբազն առաքելոցն եւ կի հետեւող հօրի ձերոյ չարին, զոր (=որ) եւ ձեզ զօրէն իւր»: («The Key of Truth», Fred. Conybeare, Oxford, 1898, «Բանալի ճշմարտութեան», էջ 19, հմմտ. նաեւ 16—19:)

## 2.

Այս անդամ էլ սկսենք Արտաւաղիկց: Ինչպէս զիտենք, Արտաւաղիկի զրոյցները բաժանում են երեք հիմնական տարբերակի, որոնցից մէկում Արտաւաղիկ բարի է (Եղնիկ եւ Հարցմունք եւ պատասխանիք), երկրորդում՝ թէ բարի ու թէ չար (Խորեացի), իսկ երկրորդում՝ բացառապէս չար՝ «Ծիդար» ածականով կամ Ծիդար անունով (Վանական վարդապետ եւ այլք): Ծիդարին վերաբերող զրոյցների իւր հերթին կարելի է բաժանել երկու խմբի. սրանցից առաջինը կը մինի Արտաւաղիկի զրոյցների հենց նոր յիշած Վանականի ու այլոց տարբերակ, իսկ միւսը մի շատ կարեւոր փոփոխակ, որուն գիւսւոր հերոսը դիւական Ծիդարն է, իսկ Արտաւաղիկը՝ նրա հայրը (Ասկեփորիկ, Գրիգոր Խլաթեցու Յայսմաւուրք եւ այլն):<sup>1</sup>

Եթէ պայմանաբար Եղնիկի տարբերակն անուանենք թԱ (բարի Արտաւաղիկ), Խորեացունը թԷԱ (բարի ու չար Արտաւաղիկ), Վանականինը՝ չՃԱ (չար Ծիդար-Արտաւաղիկ), Տաշեանի «Յուցակինը» չՀԱ (չար կամ շիդար Արտաւաղիկ), իսկ մի ենթաղրական տարբերակ՝ չՃ (չար Ծիդար), ապա մէր կարծիքով այս զրոյցների դարձացումը ու միախառնուելը կարելի է պատկերացնել այսպիսի ճիւղապետութեամբ:



<sup>1</sup> Այս վերջին տարբերակը տեսեք «Բազմավէպ», Անեստիկ, 1877, էջ 276, «Բազմավէպ», 1906, էջ 56—57 (Ն. Անդրեյեանի, «Բնուութիւն մի Ծիդարու վեցյա յառածում») ու Խաչտելիք, II, 74—76:

Հստ այս ենթադրական ճիւղագրութեան՝ սկզբնապէս պէտք է եղած լինին բարի Արտաւազդի (թ. 1) ու չար Շիդարի (թ. 2) անկախ զրոյցներ։ Այս զրոյցները միացել են եւ առաջ են եկել միացեալ փոփոխակներ, որոնցում բարի հերոսն Արտաւազդն է, իսկ չարը Շիդարը. թ. 3ում սրանք ժամանակակից են եւ հաւանօրէն հակառակորդ, իսկ թ. 4ում արդէն դարձել են հարազատներ. Արտաւազդը բարի հայրն է, իսկ Շիդարը՝ չար որդին։ Վերջապէս գալիս են երեք խառն փոփոխակներ, որոնցից մէկում (թ. 5) Արտաւազդը թէ չար է եւ թէ բարի (Շիդարի հանդէս չէ գալիս), միւսում (թ. 6) հերոսը չար է եւ կոչում է Շիդար-Արտաւազդ, իսկ վերջում (թ. 7) Շիդար յատուկ անունը դարձել է հասարակ անուն կամ ածական եւ չար հերոսը կոչում շիդար Արտաւազդ։

Մեր այս ենթադրական ճիւղագրութեան գլխաւոր կուռաներից մէկն այն համոզումն է, որ սկզբնապէս Շիդարը յատուկ անուն է եղել, ապա դարձել հասարակ անուն՝ գեւ, չար ողի նշանակութեամբ եւ յետոյ միայն ստացել ինենթ կամ ինելազար բարի իմաստ<sup>1</sup>։ Առաջին անգամ Գրիգոր Խալաթեանցն է 1896ին ընդունել, որ Շիդարի զրոյցը եղել է նոյն իսկ Խորենացու ժամանակ, եւ Շիդար անունը ենթադրաբար համեմատել է պարսկերէն շիդա բարի հետ, որ նշանակում է ինելազար (Խալաթեան, I, 318—322)։ Տաս տարի յետոյ Վենետիկ Մինթարեաններից Ներսէ Վ. Անդրիկեանը միաժամանակ երկու բացատրութիւն է տուել. նախ որ «Շիդար» բառը կարող է լինել արարերէն շաբը բառը, որ նշանակում է անառակ, մոլեզին, եւ երկրորդ որ Շիդար անունը, ևթէ հին է այս յորջորջումը, կարող է փոփոխակը լինել Տիրիթ-Արտաշէսի որդի Աշխադարի անունն («Բաղմալէպ», Վենետիկ 1906, էջ 56—59)։ Վերջին բացատրութեան դէպքում ուրեմն բառի յաջորդական օղակներ պիտի եղած լինեն Աշխադար-Ախշադար-Շադար-Շիդար։ Այս բացատրութիւնն ընդունում են Ստ. Կանայեանցն («Անյայտ գտառներ Հին Հայաստանի», Վաղարշապատ 1914, էջ 52) ու կ. Կոստանեանցը (Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», 322)։ Մենք Շիդար անունն Աշխադարի հետ կապելն էլ համարում ենք

ծայրայեղ պատմականացման հետեւանք։ Խնդրին դարձեալ պէտք է մօտենալ դիցարանական ակնոցներով։ Երբ Գրիգոր Մագիստրոսն «Աշտիշատայ դիցազնական դիւատիան դից» կողքին ու «Անդարսմետականի» — սատանայի մօտ դնում է շիդարներին՝ զրելով, թէ «Հուայտական շիդարացն չարս չամաղաղեալ չոհանան ի վերայ մեր («Թղթերը», իբ, «Առ վարդապետն Սարդիս՝ առաջնորդ ուխտին Սեւանայ», 67), — ապա կասկած չի կարող լինել, որ ԺԱ. դարում շիդարները չար ողիներ էին համարում։ Էջմիածնի ձեռագրատան (նոր) թ. 582 ձեռագրի 125 ա էջում կարդում ենք. «...շիդարք եւ չահապետք եւ վիշապք եւ քաջք», որից նոյնպէս երեւում է, որ շիդարները չար ողի էին համարում։ Բայտ այսմ ընդհանուր առմամբ հաստատում է Ալիշանի կարծիքը («Շիդարք. այսուք... գեւք էին»). «Հին հաւատք», 219) եւ հերքում Անդրիկեանինը («Շիդարք... յամենայն դէպս գեւ մը չէ»). «Բաղմալէպ», 1906, էջ 59)։ Շիդար բառը յետագայում «դեւ» իմաստով լինում ածական նոյնանիչը դառնալով ժողովրդական «դիւոտ» բառին, որի յաջորդ առումն է արդէն «խելազար» իմաստը (Դիւոտ» բառը տեսէք Ամատունի, 145—166, Աճառեան, «Գաւառական Բառարան», 279)։ Շիդար բառը Գր. Խլաթեցու Յայմաւուրքի մէջ դարձել է Շիքար, իսկ ժողովրդական բարբառներից մէկում՝ շիքար։ Վերջին ձեւը դանում ենք Ալաշկերտցց մի առածի մէջ, որ անտեսուած է մնացել մինչեւ այժմ եւ որ հետեւեալն է.

«Յուշիկ քալեմ, կըսեն՝ կամկար,  
Ծուշուտ քալեմ, կըսեն՝ շիթառ»։

Առածը մէջ բերող Աճառեանին ստոյդ յայտնի չէ բառի նշանակութիւնը, եւ նատարակուսանքով (մի զոյտ հարցականով) բացատրում է. «իննթուկ կամ շտապո՞ղ?» («Գաւառական Բառարան», 828—829)։

Շիդար անունն կամ բառի վերոյիշեալ բացատրութիւններին մենք հակարում ենք հետեւեալ ստուգաբանութիւնները։

Շիդարը կարող է լինել ասորաբարեւացոց Շամիբամ-իշտարը կամ, որ նոյնին է, Կակաբա-Աստղիկ-իշտարը (Թմին, 20—21, «Դիցարանութիւն Հայոց», «Բաղմալէպ», 1897, էջ 356 ու Աբեղեան «Հայ ժող. առասպելները», 516—517)։ Այս աստուա-

ծուհին Արայի առասպելի մէջ հայ գիւցադ-նին թշնամի է եւ չար, իսկ ժողովրդական վէպի մէջ արդէն յատուկ Զար մակդիրն է ստացել՝ կոչուելով Զար Աստղիկ (Կանայեանց, Սասմայ ծոեր վէպի երեք փոփոխակ, էջ իդ): Իշտարը հեշտութեամբ կարող էր դառնալ Շիտար-Շիդար: Միակ գժուարութիւնն այն է, որ մինչդեռ իշտարը կին էր, Շիդարը տղամարդ է: Սակայն հայ ժողովրդական վէպի գիտական ուսումնաւսիրութիւնը վաղուց լուծել է այս դժուարութիւնն՝ ապացուցելով, որ գիցարանական ու վիպական էակների սեռափոխութիւնը հնարաւոր է եւ կայ մեր վէպի թէ հին ու թէ նոր փոփոխակների մէջ: Արեղեանը ցոյց է տուել, թէ Խորենացու Տարբան-Տարօն տղան մեր վէպի այն տարբերակի մէջ, որ գտնում ենք արաբացի պատմագիր ել-Վակիդու (748—823 թ. թ.) մատեանում, զարձել է Տարուն անունով աղջիկ, որ Սասոյ հարսն է: Կանայեանցն էլ եւր հերթին ապացուցել է, որ հին հայոց Աստղիկ դիցուհին ժողովրդական վէպի մէջ դարձել է Պարոն Աստղիկ թագաւոր, իսկ Բիւզանդիոյ կայսր Յովհաննէս Զմշկիկ նոյն վէպի մէջ դարձել է թագուհի՝ Զմշկիկ Առվթան անունով («Սասմայ ծոեր վէպի երեք փոփոխակ», էջ իդ—իե):

Բայց Շիդար անունը կարելի է մի ուրիշ կերպ էլ ստուգարանել: Պարսկ ու Հայոց առասպեկների մէջ չալութեան գլխաւոր մարմնացումն Աժդահակն է, որի անուան հնագոյն ձեւն է Աժի-Դահակ: Յայտնի է, որ հայերէնն ունի Աշղահակ (Խորենացի, Ա., իդ (իե), 73 ծ., Ա., իւ (իւ), 74 ծ. եւ այլն, թ. Արծրունի, Ա., ե, 36—38, Ա., ը, 54, գ. Մագիստրոս, «Թղթեր», ՀԵ, «Առ. նոյն Մամիկոնեան», 216), որի հնադեւր կը լինէր Աշղահակ: Աժի-Դահակին համապատասխան: Ապա ծանօթ է նաեւ աժդահար, որ մեր ժողովուրդը գործ է ածում աժդահար (=վիշտ) բառի փոխարէն: Ամատունի, 5 ունի «աժդահար, աժդահար» (պարսկերէն էժտէրհաշ): որի նշանակութիւն դնում է «վիթխարի, մեծ օձ կամ մարդ»: նոյն տեղ բերուած է քաղուածք Սրուանձեանցի «Մանահայից»: — «Կտեսնայ ի՞նչ, մէկ աժդահար դէվ մը պառկէ»: «Էս մարթերք աժտըհար են» (Կանայեանց, Սասմայ ծոեր վէպի երեք փոփոխակ», 108): «Մէզնում դեւ, վիշտ, աժդահար կամ աժ-

դահար իրար հետ սերտ կապուած են» (Արեղեան, «Հայ ժող. առասպեկները», 348): Հմմտ. նաեւ Azdahar անունը (Justi, 54): Դիտելի է, որ ժողովրդի բերանում Արտաշատը հնչուում է Արդաշար եւ Աստուած-Ասպածն Աստուածածին բառի մէջ դարձել է Ասպարածին, Ասվարածին, Աստվարածին (Աճառեան, «Արմատական Բառարան», 580): Այս ձեւերի նմանութեամբ Աշիդահակը կարող էր արտասանուել ածիԴԱհար, այս էլ արագարանութեամբ դառնալ Շիդար (ապա Շիդար կամ Շիթար, Շիթար ու Շիթառ) ճիշտ այսպէս, ինչպէս ԹԱՆԱՀԱՑԻ վանքի անունը դարձել է Թանադի վանք («Վիմական տարեգիր», 154, արձ. 1307 թ.ա):

Մենք գերազասում ենք Շիդար անուան ու բառի այս երկրորդ ստուգարաւանութիւնը:

Մինչեւ այժմ մեր յիշած տարբերակների մէջ ամէնից շատ խօսուել է 1 թԱ. ու 5 թԱ. փոփոխակների մասին: Ընդհանրապէս անուշագրութեան են մատնուած Շիդարի զրոյցները, մինչդեռ առանց Արտաւագդի ու Շիդարի զրոյցների յարաբերութեան հարցը պարզելու անհնարին է ճիշտ զարգափար կազմել այս առասպելի զարդացման ու հետեւարար նաեւ էութեան մասին: Յատկապէս անհրաժեշտ է չեշտել թ. 4ի իմաստ կարեւոր լինելը, մի տարբերակ, որի մէջ Արտաւագդը բարի հայրն է, իսկ Շիդարը չար որդին: Մեր կարծիքով թ. 4ը կարող է ելակէտ ու բանալի ծառայել Արտաւագդի ու Շիդարի զրոյցների պարզաբանութեան համար:

Այս զրոյցների յաջորդականութեան մասին մեր գրականութեան մէջ երկու հակագիր կարծիք կայ: Սրանցից մէկի արտայայտիչն է Գր. Խալաթեանցն, լսու որի առասպեկի հնագոյն փոփոխակ պէտք է համարել հայկական Մեսիա բարի Արտաւագդի զրոյցը, շար Արտաւագդինը յետադայում է կազմուել քրիստոնէական մտապատկերների աղջեցութեամբ<sup>1</sup>: Միւս կարծիքի հեղինակը թ. Արեղեանն է, որի ասելով հնագոյն չար Արտաւագդի առասպեկն է, բարի Արտաւագդինը յետոյ է ծագել եւ վերջում չարն ու բարին խառնուել են իրար: Արեղեան, «Հայ ժող. վէպը», 354—376: Նկատենք, որ

<sup>1</sup> Խալաթեան, I, 316:

Արտաւազդի առասպելը քննելիս Արեղեանը բոլորովին չի ջօշափում Շիդարի հարցը, եւ այս հաղամանքը միակողմանի է դարձնում նրա վերլուծութիւնը: Ինչ վերաբերում է Ստ. Կանայեանցին, ապա պէտք է առել, որ սա թէեւ թոռոցիկ խօսում է Շիդարի մասին, բայց Արտաւազդի ու Շիդարի զրոյցների առընչութեան կամ թէ բարի ու չար դիւցազների առասպեկների յաջորդականութեան հարցը չէ դնում: Կանայեանցի կարծիքով Արտաւազդի ու Շիդարի զրոյցները նման լինելով՝ ազգել են իրար եւ չփոթուել, իսկ մասնաւորապէս Արտաւազդի բնաւորութեան երկուութիւնը բացատրում է նրանով, որ առասպելը պահել է յիշողութիւններ թէ բարի հայ Արտաւազդների ու թէ չարդեւ մար Արտաւազդների մասին («Անյայտ գաւառներ Հին Հայաստանի», 52 ու 119):

Ինչպէս երեւաց արդէն զրոյցների մեր կազմած ճիւղագրութիւնից, այս կէտում մենք համաձայն ենք Խալաթեանցի կարծիքն. հնադոյնը պիտի համարել բարի Արտաւազդի առասպելը. դիւցման հետեւանքով է, որ կրակի աստուած Արտաւազդը դարձել է չար Արտաւազդ:

Վէճի լուծմանը շատ նպաստում է Արեղեանի այն ճիշտ բանաձեւը, թէ «մէր Արտաւազդի առասպելը նոյնն է, ինչ որ Մէրի առասպելը»<sup>1</sup>: Եթէ Արտաւազդ = Մէր (ու Ամիբան), իսկ Մէր (ու Ամիբան) = Մէր-Մէթրա, իսկ վերջինս միայն ու միայն բարի աստուած է, ապա տարակոյս չկայ, որ սկզբնական Արտաւազդը բարի աստուած կամ դիւցազն է եղել: Եթէ մենք նկատի առնենք նաև այն ժամանակաբանական կարդը, որով հանդէս են եկել Արտաւազդի առասպելի տարբերակները մէր զրականութեան մէջ, ապա կը նկատենք այն ուշագրաւերելու, որ քանի զնում ենք դէպի հին դարերն, այնքան զրոյցի հերոսը բարի բնաւորութիւն ունի, քանի մօտենում ենք յետնազոյն դարերին, հերոսը չարանում է եւ դառնում անխառն դիւտիկան, իսկ արանքում նա թէ բարի է ու թէ չար: Առասպելի փոփոխակների այսպիսի կանոնաւոր յաջորդականութիւնը չի կարելի դրանցման:

<sup>1</sup> Արեղեան, Հայ ժող. առասպեկները, 366:

պատահականութիւն համարել: Այս յաջորդականութիւնը հլու հետեւում է դիւցման զարդացման:

Առասպելի հնագոյն տարբերակը Եղնիկի պատմածն է: Յետնազոյնները Շիդար կամ շիդար Արտաւազդի փոփոխակներն են: Միջին տեղը բանում է Խորենացու տարբերակը, որի հետաքրքրականութիւնը մեծանում է նրանով, որ սրա մէջ գտնում ենք փոխանցման հանդրյացը՝ գրուած տաղաչափօրէն.

Ահա դիւցման լակոնական ելակէտը:

«Վիշապազունք | գողացան | զմանուկն | Արտաւազդ եւ դեւ | փոխանակ | եղին»:<sup>1</sup>

Ժողովրդական ստեղծագործութիւնը յետին թուով սրբագրում է առասպելը: Վիշապամարտ Արտաշէսի զաւակը չէր կարող վիշապամարտ չլինել կամ դեւ լինել. իսկական Արտաւազդը, բարի դիւցազն Արտաւազդը գողացուած է. վիշապազունքները նրան փախցրել են. նա գերի է դեւստանում. նա կարող է եւ պէտք է աղատուի: Վիշապամարտ Արտաշէսի պալատում մեծացած եւ «ի ծննդենէ մոլեալ» արքայազնը բարի հօր զաւակը չէ, այլ տեղը դրած վիշապազն: Արեւամանուկին փոխարինել է դիւտամանուկը: Սա՛ է, որ նախանձում է Արտաշէսին: «Զամանէ՛ երդիչքն Գողթան առասպեկներանեն այսպէս, եթէ՝

«Ի մահուանն | Արտաշէսի | կոտորածք | լինէին

Դժուարի | Արտաւազդ | ասելով | ցհայրն. Մինչ | դու | զնացեր եւ զերկիրս | ամենայն | ընդ քեզ | տարար ես | աւելակացս | որպէս | թագւուրեմ:»<sup>2</sup>

Այս դիւտամանուկ Արտաւազդին է անիծում վիշապամարտ հայրն՝ օգնութեան կանչելով իւր մարտակից ու տարերքով իրեն հարազատ բարի ողիներին-քաջքերին.

<sup>1</sup> Խորենացի, Բ, կա, 192:

<sup>2</sup> Խորենացի, Բ, կա, 191-192. «Ի մահուանն Արտաշէսի բազում կրտորածք լինելն ըստ որինի հեթանոսաց. գժուարի, ասեն, Արտաւազդ ասելով ցհացին, նետում ենք նորդածած բառերը: Ենթադրելով, որ պատմածից արդէն յայտնի կը լիներ, թէ խօսքն Արտաշէսի մասին է, կարել է հանել «Արտաշէսի» բառը՝ թողնելով տողի մէջ «բազում» ո՞ւ: Այս դէպւում վէպի տողը կը լինի հետեւեալը.

«Ի մահուան | սըն բազում | կոտորածք | լինէին...»

«Դու | յորս հեծցիս | յԱզատն ի վեր | ի  
Մասիս,  
Զքեղ կալցին | քաջք տարցեն | յԱզատն  
ի վեր | ի Մասիս,  
Անդ | կայցես | եւ զլոյս | մի տեսցես»:<sup>1</sup>

Շարունակութեան մէջ հերոսի բոլոր գծերը դիւական են կատարելապէս։ Միակ հետքը, որ մնացել է բարի Արտաւազդի զրոյցից, սրբազն կենդանիների-չների ներկայութիւնն է։ Դարրիների գերը համապատասխանեցրած է առասպելի նոր ողուն։ Ինչպէս Զեւսի կամակատար զարբին չեփեստուը յունաց առասպելում կամ չրուղենին օդնող կաւէ զարբինը պարսից առասպելի մէջ, հայ զարբիներն էլ, իրրեւ հրապատակն ու հրագործ էակներ, անշուշտ բարի աստծու-լոյսի, ամբողի ու կրակի աստծու կողմը պիտի պահեն ընդդէմ դիւացած հերոսի, ուստի եւ «բախեն զարն, զի զօրացին շղթայքն Արտաւազզայ»։

Տրամաբանօրէն փոխւում է Արտաւազդի երկրորդ ու վերջին ելոյթի բնոյթն էլ։ Նա, որի մասին ցաւելով ասում էին, թէ «արգելեալ է ի զիւաց» եւ տենչանքով, թնձութեամբ ու «ի յոյս կապեալք» վիպերգում, թէ «Ելանելոց է եւ ունելոց զաշխարհս», այժմ առասպելաբանւում է, թէ շղթայուած է քաջքերից, «արգելեալ կայ յայրի միում» կապեալ երկաթի շղթայիւք (յէշենք, որ երկաթը չարիստիան է)։<sup>2</sup> շանայ ելանել եւ առնել վախճան աշխարհի»։<sup>2</sup>

Դիւացումը՝ կատարեալ է։ Վիշտապահայր Արգաւանի կատաղի թշնամին եղել է չարութեան ահուելի մարմնացում, գլխաւոր վիշտ։ Հայկական չրուղենը դարձել է քաջքերից շղթայուած անմեռ Աժդաշակի։

(Շարունակնի.)

ԹԱԴՅՈՍ ԱՐԴԱՐԱՅԻՑԵԱՆ

Երեսամ:



## ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՈԼԼՈՒԴԵՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ճ.Զ. Ճ.Թ. ԳԵՐԵՐՈՒՄ

(Շարունակութիւնն.)

Ե.

Առաջին հայ աղթատունը Ամստերդամում 1663 ին։ Եկեղեցու հիմնարկութիւնը 1713 ին։ Ամստերդամի վաճառականների աղերսագիրը Աստուածատուր կաթողիկոսին։ Եկեղեցու նորոգութիւնը 1749 ին։ Պաշտամունքի դադարումը 1806 ին։ Եկեղեցու վրայ իրաւասութեան գատերը։ Ուստական կառավարութեան միջամտութիւնը։ Եկեղեցու վաճառումը 1874 ին։ Կ.Պոլսեցի Մասէհեանների ժառանգական պահանջը։ Օսմաննեան կառավարութեան միջամտութիւնը։ Հարցի փակումը։

Հոլլանդայի եւ թիւրքիայի մէջ կնքուած 1612 ի գաշնագրի պայմաններից մէկն էլ այն էր, որ երկու տէրութիւնները փոխադարձաբար կրօնական ազատութիւն էին երաշխաւորում իրենց հպատակներին։ Շնորհիւ այս հանգամանքի թրբական նաւահանգիստներից հետզիետէ սկսան Հոլլանդա գալ առեւտրական նպատակով ոչ միայն քրիստոնեաններ այլ եւ մահմետականներ։ Այն ժամանակ երբ հոռմէական կաթոլիկ գաւանութեան պատկանող Եկեղեցականներն առանց Հոլլանդական կառավարութեան յատուկ արտօնութեան չէին կարող Հոլլանդա մանել, թրբահպատակ հայերը իրաւունք ունեին ազատորէն քահանայ բերել տալ իրենց համար Ամստերդամ։

Առաջին հայ քահանան, որ մէր Պատմութեան շրջանում երեւացել է Հոլլանդայում, ոմն տէր Մարկոս Արքահամեան է բայց նպատառուի ձեւի տակ։ Հոլլանդական սահմանագիրին (Staten Generaal) 1618 օգոստոս 28 թուով մի պաշտօնական որոշումը կայ, որի համաձայն «Մարկոս Արքահամ Հայաւտանցի քահանային եւ Տենեգոսցի յոյն կոնստանտինոցին յատկացվում է տասնական Փլորին իրբեւ ճանապարհածածակուր»<sup>1</sup>։

<sup>1</sup> Bronnen եւայլ Heeringajի էլ 263։

<sup>2</sup> Խորենացի, Բ., կա, 192<sup>4</sup>

<sup>3</sup> Խորենացի, Բ., կա, 192<sup>5</sup>